ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հունիսի 2013 թվականի N 59-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ,,ԱՐԾՎԱԲԵՐԴԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի՝ 2011 թվականի դեկտեմբերի 19-ի ,,Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների տնօրենների ընտրության/նշանակման/ մրցույթի կարգը հաստատելու և ՀՀ Տավուշի մարզպետի 2007թվականի հունվարի 29-ի թիվ 6-Ն և ՀՀ Տավուշի մարզպետի 2007-ի թիվ 7-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին'' թիվ 203-Ն որոշման հավելվածով հաստատված ընթացակարգի 6-րդ կետով

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության ,,Արծվաբերդի առողջության կենտրոն'' ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու նպատակով մրցույթ անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Լ.Սարգսյան- Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ,

Ֆ.Ափինյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ ,

Ա.Գևորգյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ,

Ռ.Ներսեսյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,

Հ.Ավալյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտողարության պետ,

Կ.Դթվլաթբեկյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առող. և սոց. ապահ. վարչության պետ,

Վ.Խառատյան- Հանձնաժողովի քարտողար, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առող. և սոց. ապահ. վարչության առաջատար մասնագետ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

01 հունիսի 2013թ.
ք. Իջևան